

Հայաստան

Հոկտեմբեր – դեկտեմբեր, 2021 թվական

ՄԱԿ ՓԳՅ-ն շարունակում է արձագանքել **Լեռնային Ղարաբաղի հակամարտության** ժամանակ տեղահանված անձանց կարիքներին նաև Միջգործակալական արձագանքման երկարաձգված ծրագրի միջոցով (ծրագրի վերջին վերանայված տարբերակը տե՛ս [այստեղ](#)):

ՄԱԿ ՓԳՅ-ն **2021 թ. դեկտեմբերի Պաշտպանության նոր ռազմավարություն է մեկնարկել:** Փաստաթուղթը 2022 թ. ընթացքում կուղղորդի պաշտպանության միջամտությունները եւ փոխհատվող գործառնական միջոցառումները:

ՄԱԿ ՓԳՅ հայաստանյան գրասենյակը **խաղաղ համակեցության 30 և համայնքային կազմակերպությունների** աջակցման 12 ծրագիր ամփոփեց, որոնցից շուրջ 1,500 կանայք եւ երեխաներ են օգտվել:

ԱՌԱՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

5,841 տեղահանված մարդ

տեղեկացվել է **պաշտպանության մշտադիտարկման շրջանակում** 2021 թ. հոկտեմբերից դեկտեմբերին անցկացված 1,386 հարցազրույցների միջոցով: Ծուրջ 187 տեղահանված անձ առանձնացվել է՝ հավելյալ աջակցության եւ ծառայությունների հասանելիության նպատակով ուղղորդման համար:

1,100 ընտանիք

Լեռնային Ղարաբաղից, որոնք փախստականի իրավիճակում են գտնվում, ՄԱԿ ՓԳՅ գործընկեր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի կողմից **ձմռանը նախապատրաստվելու նպատակով դրամական օգնություն** է ստացել:

3,900 հիգիենայի պարագաների

փաթեթներ են տրամադրվել փախստականի իրավիճակում գտնվող անձանց՝ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից:



ԼՂ-ից տեղահանված կինն ավանդական կարկանդակ է պատրաստում ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի եւ «Ավորա» մարդասիրական նախաձեռնության կողմից 2021 թ. դեկտեմբերին կազմակերպված սուրբծննդյան տոնավաճառի ժամանակ: Լուսանկարը՝ ©ՄԱԿ ՓԳՅ/Արեգ Կոզմոյան

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ (2021 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ)

Ֆինանսական պահանջներ


15.4 միլիոն ԱՄՆ դոլար

Ֆինանսավորված մաս
61%
9.3 միլիոն



Պակասող ֆինանսավորում
39%
6.1 միլիոն

ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈՂ ԳՏԵՎՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ* 2021 թ. ՀՈՒՆԻՍԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ



* Աղբյուր՝ ՄԱԿ ՓԳՅ կիսամյակային վիճ. զեկույց, 2021 թ. հուլիս
** Ներառյալ 36,989 փախստականի իրավիճակում գտնվող անձինք՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետեւանքով եւ Հայաստանում բնակվող 4,461 փախստականի իրավիճակում գտնվող սիրիահայ, որոնց իր օժանդակությունն է տրամադրում ՄԱԿ ՓԳՅ-ն:

Գործառնական համատեքստ

2020 թ. սեպտեմբերի 27-ին շփման գծի երկայնքով ծայր առած բախումները տարածվեցին **Լեռնային Ղարաբաղում** եւ այլ հարակից տարածքներ, մինչեւ նոյեմբերի 9-ին հրադադարի հայտարարություն ստորագրվեց: Հակամարտությանը հետեւանքով տեղահանված շուրջ **90,000 մարդ** Հայաստանում ապաստանեց: Ըստ հաշվարկների՝ 2021 թ. մայիս 25-ի դրությամբ Հայաստանում **36,989** մարդ գտնվում էր փախստականի իրավիճակում: ՄԱԿ ՓԳՑ-ն շարունակում է ՀՀ կառավարության հետ համագործակցաբար արձագանքել տեղահանվածների կարիքներին, նաեւ՝ [Միջգործակալական արձագանքման ծրագրի շրջանակում](#):

2021 թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում 241 ապաստան հայցող իրանից, Սիրիայից, Հնդկաստանից, Իրաքից, Հորդանանից եւ այլ երկրներից դիմել են Հայաստանում պաշտպանություն ստանալու համար: Փաստաթղթերը, բնակարանային ապահովումը, պատշաճ զբաղվածությունը եւ կենսապահովման հնարավորությունները շարունակում են մնալ ապաստան հայցողների եւ փախստականների առավել հրատապ կարիքների շարքում: Հակամարտության սրացմանը զուգահեռ ընթացող COVID-19 համավարակն է՛լ ավելի խորացրեց Հայաստանի դժվարին տնտեսական իրավիճակով պայմանավորված մարտահրավերները:

ՄԱԿ ՓԳՑ-ն ու իր գործընկերներն աշխատում են պաշտպանության միջավայրի կատարելագործման ուղղությամբ, միեւնույն ժամանակ աջակցելով առավել ռիսկային խմբերին: ՄԱԿ ՓԳՑ-ն հանդես է գալիս ի շահ մտահոգության ներքո գտնվող անձանց ներառմանը ազգային արձագանքման ծրագրում, ներառյալ՝ COVID-19 վերականգնման եւ պատվաստման, օրենսդրական ու վարչական այլ բարեփոխումներում:



ԼՂ-ից տեղահանված երեխաները տոնում են Սուրբ Ծնունդը Սյունիքի մարզի Գորիս քաղաքի մանկական կենտրոնում: Դեկտեմբեր, 2021, © ՄԱԿ ՓԳՑ/Մնահիտ Հայրապետյան

Ձեռքբերումներ. 2021 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր



2,658 տեղահանված անձ օգտվել է ՄԱԿ ՓԳՅ-ի գործընկեր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի կողմից տրամադրված սոցիալական ծառայություններից (ԼՂ հակամարտության հետեւանքով տեղահանված 1,210 անձ եւ մտահոգության ներքո գտնվող 1,448 անձ):



738 տեղահանված անձ օգտվել է ՄԱԿ ՓԳՅ-ի գործընկեր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի կողմից տրամադրված առողջապահական ծառայություններից:



127 տեղահանված անձ ՄԱԿ ՓԳՅ-ի գործընկեր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի կողմից տրամադրված իրավաբանական խորհրդատվություն եւ աջակցություն է ստացել:



36 տեղահանված երեխայի ՄԱԿ ՓԳՅ-ի գործընկեր Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից դեպքերի վարման մասնագիտական աջակցություն է տրամադրվել:



Տարեց եւ հատուկ կարիքներ ունեցող 154 անձի ՄԱԿ ՓԳՅ-ի գործընկերները Հայկական կարմիր խաչի ընկերության եւ «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի կողմից օգնություն է տրամադրվել:



ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- **ՄԱԿ ՓԳՅ-ն ԿԱԶԱ շվեյցարական մարդասիրական հիմնադրամի հետ միասին շարունակել է սպասարկել ՄԱԿ ՓԳՅ պաշտպանության հարցերով թեժ գիծը:** Հաշվետու ժամանակահատվածում օպերատորները 1,000 զանգ են ստացել (86%-ը փախստականի իրավիճակում գտնվողներից), որի 75%-ը վերաբերել է մարդասիրական օգնությանը:
- **Կարողությունների ձեւավորում.** (i) 25 դատավոր եւ Միգրացիոն ծառայության (ՄԾ) 11 աշխատակից ապաստանի հայցերի քննման միջազգային չափորոշիչների եւ լավագույն փորձի թեմայով դասընթաց է անցել, ՄԾ 27 պաշտոնյա թրաֆիքինգի թեմայով դասընթաց է անցել, (ii) քրեակատարողական հիմնարկների 14 աշխատակից եւ 30 իրավաբան ուսանող փախստականների իրավունքի եւ ապաքաղաքացիության թեմայով դասընթաց են անցել, (iii) 16 բարձրաստիճան սահմանապահ մասնակցել է «Փախստականների մասին» օրենքի թեմայով դասընթացին:



ԿԱՏԱՐԱՆ ԵՎ ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ

- **Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության հետ կնքված Փոխըմբռնման հուշագրի շրջանակում** 118 տնային տնտեսության առ 2021 թ. դեկտեմբերը բնակվարձերի վճարման նպատակով դրամական օգնություն է տրամադրվել:
- ԼՂ հակամարտության հետեւանքով տեղահանված 650 տնային տնտեսություն «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի եւ Հայկական կարմիր խաչի ընկերության միջոցով **առաջնային կարիքների բավարարման համար բնափրային օգնություն է ստացել** եւ 100 տնային տնտեսություն (նախկինում հավաքակայաններում բնակվող) **իրենց ապրուստը հոգալու համար եկամտի ստեղծման գործիքներ** ստացան:

Գործընկերային աշխատանք

- ՄԱԿ ՓԳՅ հայաստանյան գրասենյակը ՄԱԿ-ի հայաստանյան թիմի հետ միասին համագործակցում է պետական եւ ոչ պետական շահակից մարմինների հետ: ՄԱԿ ՓԳՅ-ն անդամակցում է միջգերատեսչական համակարգման հարթակների ու մեխանիզմների: ՄԱԿ-ի հայաստանյան թիմի հետ միասին այն խթանում է Յայաստանում Կայուն զարգացման Օրակարգ 2030-ի կենսագործման աշխատանքները՝ ՄԱԿ-ի ԿԶ գործընկերության 2021 - 2025 թթ. շրջանակի միջոցով:
- Արձագանքելով 2020 թ. ԼՂ հակամարտության հետեւանքով տեղահանվածների մեծ ներհոսքի, ՄԱԿ-ի հայաստանյան թիմը ՄԱԿ-ի մշտական համակարգողի եւ ՄԱԿ ՓԳՅ հայաստանյան գրասենյակի համատեղ ղեկավարության ներքո գտնվող համակարգման ճկուն կառույց ստեղծեց:
- 2021 թ. դեկտեմբերին ՄԱԿ ՓԳՅ-ն հիմնեց Պաշտպանության եւ խորհրդատվության հարթակը՝ մարդասիրական աշխատանքների մասնակիցների, այդ թվում ՄԱԿ ՓԳՅ հոգաժողության ներքո գտնվող բոլոր անձանց համար պաշտպանության աշխատանքների ուղղորդման ու համակարգման նպատակով:

Ֆինանսական տեղեկություններ

2021 թվականին ՄԱԿ ՓԳՅ հայաստանյան գրասենյակը փորձում է **15.4 միլիոն ԱՄՆ դոլար** հայթայթել՝ փախստականի նման իրավիճակում գտնվող անձանց կարիքների բավարարման եւ իր տարեկան ծրագրի ծախսերը հոգալու նպատակով: **Միջգործակալական արձագանքման ծրագրի** ֆինանսական պահանջը **49.3 միլիոն ԱՄՆ դոլար է:**

ՄԱԿ ՓԳՅ-ն երախտապարտ է այն նվիրատու կառույցներին, որոնք իրենց ներդրումն ունեցան 2021 թվականի իր ծրագրերի ֆինանսավորման գործում.

Յայաստան | Եվրոպական միություն (ECHO) | Ճապոնիա | Ռուսաստանի Դաշնություն | Ամերիկայի Միացյալ Նահանգներ | ՄԱԿ CERF | GAP Inc. | UPS Corporate

ՄԱԿ ՓԳՅ-ն շնորհակալություն է հայտնում դոնոր կառույցներին՝ 2021 գլոբալ ծրագրերին առանց նախապայմանների հատկացված 10 միլիոն ԱՄՆ դոլարի չափով ներդրումների համար.

Նորվեգիա | Շվեդիա | Իսպանիա. մասնավոր դոնորներ | Նիդեռլանդներ | Դանիա | Կորեայի Յանրապետություն. մասնավոր դոնորներ | Միացյալ Թագավորություն | Գերմանիա | Ճապոնիա. մասնավոր դոնորներ | Ճապոնիա | Ֆրանսիա | Շվեյցարիա | Իտալիա. մասնավոր դոնորներ | Շվեդիա. մասնավոր դոնորներ | Իռլանդիա | Բելգիա | Իտալիա | ԱՄՆ. մասնավոր դոնորներ

Առանց նախապայմանների հատկացված միջոցները որեւէ սահմանափակմամբ չկաշկանդված այն գումարներն են, որոնց շնորհիվ ՄԱԿ ՓԳՅ-ն հնարավորություն է ստանում ճկուն կերպով օժանդակելու մտահոգության ներքո գտնվող՝ ծայրահեղ կարիքավոր եւ վտանգված բնակչությանը:

Մանրամասն տեղեկությունների համար այցելել [UNHCR Operational Data Portal](#)

ՄԱԿ ՓԳՅ հայաստանյան գրասենյակ, Ռասել Ֆրեյզեր, արտաքին կապերի համակարգող, fraser@unhcr.org